

# Իրավապահ մշակույթ

Չկա Հասարակության  
անհնց իրավունքի  
Ubi societas ibi jus

Երկշաբաթեր  
թիվ 6 (26)  
2008 թ. ապրիլի 15

## Հայաստանի երրորդ Նախագահի երդմնակալությունը



2008 թ. ապրիլի 9-ին Ազգային ժողովի հատուկ նիստում նորընտիր նախագահ Սերժ Ազատի Սարգսյանը 7-րդ դարի «Վեհանոր Ավետարանի» և 33 Սահմանադրության մայր օրինակի վրա ընդունել է հետևյալ երդումը.

«...երդվում եմ. անվերապահորեն կատարել Սահմանադրության պահանջները, հարգել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, ապահովել Հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը և անվտանգությունը՝ ի

փառս Հայաստանի Հանրապետության և ի բարօրությունը Հայաստանի Հանրապետության ժողովրդի»:

## Մասնակցե՛ք աշխարհի մեծագույն դասին 2008 թ. ապրիլի 23-ին ժամը 12-ին

2008 թ. ապրիլի 23-ին միլիոնավոր մարդիկ ավելի քան 100 երկրներում կմասնակցեն յուրաքանչյուր մարդու որակյալ կրթության իրավունքի վերաբերյալ Աշխարհի մեծագույն դասին՝ համաշխարհային մրցանիշ սահմանելու և այն Գիների մրցանիշերի գրքում գրանցելու նպատակով:

Դասը Համընդհանուր կոչ համուն կրթության (ՀԿԻԿ) քարոզարշավի Համընդհանուր գործողությունների շաբաթվա (2008 թ. ապրիլի 21-27) կենտրոնական իրադարձությունն է:

Ներկայումս 774 միլիոն չափահասներ անգրագետ են, և 72

միլիոն երեխաներ դպրոց չեն հաճախում: Կրթությունից առավելագույն գուրկ են մնում հակամարտությունների գոտիներում, գյուղական շրջաններում կամ պարզապես աղքատության մեջ ապրող, ՄԻՆՎ/ՉԻՎՅ-ից տառապող և հաշմանդամ մարդիկ: Այս պատճառով է, որ իրավիճակ ենք պետական պաշտոնյաներին և լրագրողներին «դարձե՛ք դպրոց» մասնակցելու Աշխարհի մեծագույն դասին:

Դասին կարող է մասնակցել յուրաքանչյուր ոք՝ անկախ տարիքից: Որքան շատ մարդիկ մասնակցեն դասին, այնքան ավելի կմեծանա հավանականությունը, որ աշխարհի կառավարիչները կանսան իրենց քաղաքացիների ծայրին և գործնական քայլեր կձեռնարկեն օգնելու աշխարհի բոլոր մարդկանց կրթություն ստանալու համար:

Դուք ևս կարող եք կարևոր ներդրում ունենալ աշխարհում և այդ թվում Հայաստանում՝ համընդհանուր որակյալ կրթության ապահովման գործում և ստանալ «Աշխարհի մեծագույն դասին» մասնակցության և Գիների մրցանակալրի վկայական՝

• դասն անհրաժեշտ պահանջներին և պայմաններին համապատասխան կազմակերպելու.

• պատշաճ ձևակերպված վավերացման թերթիկն ուղարկելու դեպքում:

Դասին մասնակցել կամ դասն իրենց դպրոցներում, հիմնարկներում կազմակերպել

ցանկացողները կարող են համաձայնցից (www.acrpc.am) ստանալ դպրոցական փաթեթը, որը ներառում է դասի պլանը և նախաձեռնության մասին անհրաժեշտ այլ տեղեկություն:

Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել կամ գանգահարել՝

Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն (ՀՄԻԿ) ՀԿ ՀՀ, ք. Վանաձոր, Շիրակապու 1-ին նրք., թիվ 2  
Հեռ.՝ +374 (322) 2 29 67  
Հեռապալմունք՝ +374 (322) 4 47 81  
Էլ. փոստ՝ gmanoukian@acrpc.am  
apapikyan@acrpc.am  
Կայքէջ՝ www.acrpc.am

## «ՄԵՆՔ, ԻՍԿԱՊԵՍ, ՀԱՎԱԿՆՈՏ ԶՐԱԳՐԵՐ ՈՒՆԵՆՔ»

Հանրապետության Նախագահի հրամանագրով վարչապետ է նշանակվել Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սուրենի Սարգսյանը:

«Նրա ղեկավարությամբ կառավարությունը առաջիկա տարիներին, իրոք, կիրազորի հավակնոտ ծրագրեր,- ապրիլի 10-ին նա ռավարության միստի ժամանակ հայտարարեց նորընտիր նախագահը՝ պաշտոնապես ներկայացնելով նորանշանակ վարչապետին:- Ես դրանում ուղղակի համոզված եմ»:

Ներքաղաքական անկայուն իրավիճակում ստանձնելով արդեն երկար ժամանակ քննարկումների ու ենթադրությունների տեղիք տվող վարչապետի պաշտոնը՝ Հայաստանի նոր վարչապետը շնոր-

հակալություն հայտնեց՝ նշելով, թե «քաջ գիտակցում է, որ սա մեծ պատասխանատվություն է»:

«Ես կոչտ և խստապահանջ ղեկավար եմ եղել Կենտրոնական բանկում, և դա շարունակվելու է, բայց միևնույն ժամանակ ուզում եմ ձեզ տեղյակ պահել, որ ես թիմային աշխատանքի կողմնակից եմ և համոզված եմ, որ մենք կկարողանանք կառավարությունում թիմային աշխատանքի այդ մթնոլորտը շարունակել, որովհետև, ինչպես նշեց նախագահը, մենք, իսկապես, հավակնոտ ծրագրեր ունենք»,- ապրիլի



10-ին ասաց Տիգրան Սարգսյանը՝ ավելի ուշ նշելով, թե բարեփոխումները լինելու են հեղափոխական, իսկ պաշտոնավարումը՝ երկար:

## ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում \_\_\_\_\_ էջ 2
- Շիրակի զարգացման հույսի կամարը \_\_\_\_\_ էջ 3
- Մարգարիտ Չովհաննիսյան. «Ճշմարտությունն ինքնին հաղթություն է...» \_\_\_\_\_ էջ 3
- Թամարա Աբրահամյան. «Հասարակական փորձագիտական տեսակետ...» \_\_\_\_\_ էջ 4
- Մարինե Մխիթարյան. «Տարածական կինոսարունի հիմնադիր հանճարը» \_\_\_\_\_ էջ 6
- Արատավոր ծնունդների թվով Հայաստանը երկրորդն է ԱՊՀ տարածաշրջանում... \_\_\_\_\_ էջ 6
- Արևիկ Այվազյան. «Մայրությունը, գեղեցկությունն ու սերը՝ կյանքի աղբյուր» \_\_\_\_\_ էջ 7
- Գրիգոր Տաթևացի. «Աղոթքի մասին» \_\_\_\_\_ էջ 7
- Տեղեկույթ, ազդ, հայտարարություններ \_\_\_\_\_ էջ 8



# Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում

## ԵՎՐԱՆՈՐՀՈՒՐԳԸ ԿԱՍԿԱԾԻ ՏԱԿ Ե ԳՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԿԱՍՏԱՆԻ ՎԱՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ, ԵՑԵ ԻԾԵՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՀԱՊԱՂ ԲԱՐԵՆՈՐՈՎՈՒՄՆԵՐ ՉՁԵՆԱՐԿՆԵ

«Եստիվ Գայաստանի իշխանություններին կոչ է անում անհապաղ բարենորոգումներ ձեռնարկել, այլապես Եվրատիրոնորը կասկածի տակ կդնի երկրի նկատմամբ վստահությունը»,- նշված է ԵՄԿԿ «Ժողովրդավարական ինստիտուտների գործունեությունը Հայաստանում» բանաձևի նախագծում, որը ներառվել է ԵՄԿԿ ապրիլի 17-ի նստաշրջանի օրակարգում:

Փաստաթղթում նշվում է, որ եթե Հայաստանը չկարողանա եական առաջընթաց արձանագրել, երկարաժամկետ և անկեղծ կրիտիկություն վարել գեկույցում նախանշված ոլորտների բարենորոգումների շուրջ, Կեհաժողովը իր հունիսի նստաշրջանում կքննարկի Հայաստանի պատվիրակության մանրատի դադարեցման և նրան ձայնի իրավունքից զրկելու հնարավորությունը:

Նշենք, որ ի քիվս այլ պահանջների՝ Կեհաժողովը հայկական կողմին ներկայացրել է քաղաքական համակարգը



տեսանկյունից, թե արդյոք նրանք ներկայացնում են հայ հասարակության շահերը: Բացի այդ՝ փաստաթղթում ընդգծվում է օրենքում և գործնականում ժողովների անցկացման ազատությունը երաշխավորելու անհրաժեշտությունը:

Հայաստանի իշխանությունները պետք է լրացուցիչ

այնպես բարեփոխելու անհրաժեշտության մասին դրույթ, որ ընդդիմության համար երաշխավորվեն պատշաճ իրավունքներ: Բացի այդ՝ փաստաթղթում նշվում է, որ ընտրական գործընթացը պետք է մանրագրի կերպով բարելավվի, որպեսզի երաշխավորվի օբյեկտիվ ընտրական համակարգի ձևավորում, որը ենթակա չլինի որևէ քաղաքական կուսակցության կողմից վերահսկողության, երաշխավորվի ազգային հեռուստատեսության և համրային հեռուստատեսության և ռադիոյի համեմատողի անկախությունը: Կերոնշյալ կառույցի կազմն անհրաժեշտ է ստուգել այն

Հայաստանի իշխանությունները պետք է լրացուցիչ

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԱՅՈՒՅՑ**

Ապրիլի 22 - Երկրի օր  
 Ապրիլի 23 - Գոցի և հեղինակային իրավունքի միջազգային օր  
 Ապրիլի 23-29 - Համընդհանուր ճանապարհային ակտիվության ՄԱԿ-ի շաբաթ  
 Ապրիլի 30 - Յուրաքանչյուրի գոհեղի հիշատակի օր

ջանքեր գործարդել իսկապես անկախ դատական համակարգի ապահովման հարցում՝ դատարանների կողմից կայացվող վճիռների նկատմամբ հաստատական վստահությունը մեծացնելու նպատակով: Հայաստանի իշխանությունները պետք է վերջ դնեն կամայական ձեռնարկություններին, ինչպես նաև կալանավորների նկատմամբ վատ վերաբերմունքին: Անհրաժեշտ է Հայաստանի ոստիկանության աշխատանքի նկատմամբ արդյունավետ հասարակական վերահսկողության գործուն մեխանիզմներ դնել:

Արմինժո

### ՄԱԿ-ի՝ Իրաքին օժանդակող առաքելության 12-րդ գեկույցը



ՄԱԿ-ի՝ Իրաքին օժանդակող առաքելությունը (ԻՕԱ) իրատարակել է իր 12-րդ գեկույցը երկրում 2007 թ. հուլիսի 1 - դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում մարդու իրավունքների վիճակի մասին:

Ձեկույցն արձանագրում է, որ 2007 թ. վերջին երեք ամիսները բնորոշվեցին դաժան հարձակումների քիվ ակնհայտ նվազեցմամբ: 12-րդ եռամսյակային գեկույցը ողջունում է Իրաքի կառավարության և դատական իշխանությունների ձեռնարկած միջոցները՝ ուղղված կալանավորների նկատմամբ վերաբերմունքի բարելավմանը: Սակայն դեռևս լրացուցիչ ջանքերի անհրաժեշտություն կա՝ կալանավորների շարունակվող, հետաձգված գործերը վերաճայելու համար:

ԻՕԱ-ն նաև ողջունում է Քուրդիստանի տարածքային կառավարության կողմից ձեռնարկված կառուցողական քայլերը մարդու իրավունքների մի շարք հարցերի առնչությամբ, ինչպես նաև Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի համաձայնագրի վավերացման Իրաքի կառավարության որոշումը:

### Մարդու իրավունքների քննություն ՄԱԿ-ի անդամ երկրներում

ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի հանձնաժողովը պարբերական քննության (ՅՊԶ) աշխատանքային խումբը մանրակրկիտ քննում է մարդու իրավունքների վիճակը ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրներում: ՅՊԶ-ն ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի նոր մեխանիզմ է, որը հետագա չորս տարիների ընթացքում կամոնավորապես կուսումնասիրի մարդու իրավունքների վիճակը ՄԱԿ-ի անդամ բոլոր 192 երկրներում: Աշխատանքային խումբը մինչև ապրիլի 18-ը կուսուզի հետևյալ 16 երկրների՝ Ալժիր, Արգենտինա, Բահեյն, Բրազիլիա, Չեխիա, Եվրադոր, Ֆիլիպիններ, Գերմանիա, Ինդոնեզիա, Մարոկո, Նիդեռլանդներ, Ֆիլիպիններ, Լեհաստան, Հարավային Աֆրիկա, Թուրքիա, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն, ներկայացրած արձանագրությունները: 2008 թ. ընթացքում նախատեսվում է ստուգումներ անցկացնել նախապես ընտրված հաջորդ 48 երկրներում:



Այս նոր մեխանիզմի կարևոր առավելություններից է այն, որ հետազոտվող երկրների կառավարությունները իրենք իսկ պետք է լայնածավալ հարցումներ իրակա-

նախապես ընտրված հաջորդ 48 երկրներում:

Այս նոր մեխանիզմի կարևոր առավելություններից է այն, որ հետազոտվող երկրների կառավարությունները իրենք իսկ պետք է լայնածավալ հարցումներ իրակա-

նացնեն քաղաքացիական հասարակության շրջանում: «Միջազգային համաճեղում» կազմակերպությունը լրջորեն հետևում է գործընթացին: Ընտրված 16 երկրներից 14-ի վերաբերյալ արդեն տեղեկություններ են հայթայթվել:

Կազմակերպության անդամներն ու աջակիցները համագործակցում են յուրաքանչյուր երկրի քաղաքացիական հասարակության հետ՝ նպատակ հետապնդելով վերադարձնել նրանց իրազեկությունը նոր գործընթացի բարեբերյալ:

### Մարդու իրավունքների մասին՝ հակիրճ

Վանաձորի մարդու իրավունքների գրադարանում ստացվել է «Մարդու իրավունքների մասին՝ հակիրճ» (Human rights brief)՝ Վաշինգտոնի Ամերիկյան համալսարանի մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի կենտրոնի կողմից իրատարակվող ամսագրի հերթական՝ 2008 թ. ծննդվա՝ 15.2 համարը: Այն ներառում է նորություններ միջազգային իրավունքի, միջազգային քրեական դատարանների, մարդու իրավունքների տարածքային համակարգերի, ՄԱԿ-ի և այլ մարմինների մասին:

### ԵԱԿ մարդու իրավունքների ղեկավարը հորդորում է կառավարություններին քայլեր ձեռնարկել՝ վերացնելու զնչունների նկատմամբ կիրառվող խտրականությունը

Գնչունների միջազգային օրվա՝ ապրիլի 8-ի կապակցությամբ ԵԱԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) տնօրենը հորդորել է կառավարություններին և տեղական իշխանություններին միջոցներ ձեռնարկել՝ զնչունների նկատմամբ խտրականության վերացման և հասարակական կյանքում նրանց լիարժեք ներգրավումն ապահովելու նպատակով:

2003 թ. ԵԱԿ անդամ երկրներն ընդունել են Գործողությունների պլան՝ պայքարելու զնչունների և սինթիզիկանի նկատմամբ խտրականության և ռասայականության դեմ:

Հինգ տարի անց՝ 2008 թ. հուլիսի 10-11-ը, ԵԱԿ ղեկավարությունը, փորձագետները և զնչունների ներկայացուցիչները կհանդիպեն՝ քննարկելու Գործողությունների պլանով նախատեսված քայլերի իրականացման ընթացքը:

Գարավոր նախապայմանները և զնչունների նկատմամբ թշնամական վերաբերմունքը որոշ երկրներում

րում վերածվել են եվրոպական միության տարածաշրջանում վերաբնակեցման շարժումների: Որոշ ԶԼՄ-ների ներկայացուցիչներ և քաղաքական գործիչներ ակտիվորեն նպաստել են զնչունների և սինթիզիկանի նկատմամբ անհանդուրժողականության խորացմանը՝ պիտակավորման և այլ նվաստացուցիչ միջոցներով:

ԵԱԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակն ընդունում է ողջունում է ԵԱԿ անդամ երկրների, Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության և զնչունական ու սինթիզիկանի ներկայացուցող կազմակերպությունների ջանքերը զնչունների իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Միաժամանակ ԺՀՄԻԳ-ը հորդորում է առավել ազդեցիկ միջոցներ ձեռնարկել՝ ստանձնած պարտավորությունների իրականացման ուղղությամբ:

### Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) տվյալները



Ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության տվյալների՝ 2007 թ. զարգացող երկրների հատկապես Եվրոպական աշակուցության հիմնադրամի ներդրումների ծավալը նվազել է մինչև 1.7

միլիարդ եվոյի: Շուրջ 1600 եվրոպական ՈԿԿ-ներ Աղբատության հարթաշարման հանձնարարությունը քարոզարշավի (ԱՀԴԶ), Եվրոպական ՈԿԿ-ների օգնության և զարգացման հանձնաժողովի՝ Կոնկորդի գլխավորությամբ դատապարտել են եվրոպական երկրների կառավարություններին՝ բնակչության կենսամակարդակը բարելավելու ուղղությամբ իրենց ստանձնած պարտավորության կատարումը ձախողելու համար:

«Եվրոպան ձգտում է առաջատար դեր ստանձնել աշխարհի զարգացման աջակցելու հարցում, սակայն ցուցանիշները վկայում են, որ կառավարությունները թերաճում են իրենց պարտավորությունների կատարման հարցում: Նախորդ տարվա ընթացքում Եվրոպայի միության անդամ 27 երկրներից 17-ը ամենկիս չեն ընդլայնել իրենց աշակուցության չափերը: Ավելիք՝ 11 երկրներում ցուցանիշները նույնիսկ նվազել են: Հարկավոր է վերացնել հանձնառությունների և իրականության միջև առաջացած աճերպետը»,- հայտնվել է Կոնկորդի տնօրեն Օ. Կոնտոլոն:

ԵՄ անդամ երկրների կառավարությունները պետք է ավելի հեռահար նպատակներ սահմանեն իրենց աշակուցությունն ավելի շոշափելի և կանխատեսելի դարձնելու համար:

2008 թ. մայիսի 22-ին Կոնկորդը հանգամանակից զեկույց կներկայացնի ԵՄ անդամ երկրների՝ աշխարհի զարգացման ուղղված աշակուցության ծավալների ցուցանիշների վերաբերյալ:

# Մենք՝ քաղաքացիական Հանարակույթյունը



## ՀՈՒՅՄԻ ԿԱՄԱՐ

## ՇԻՐԱԿԻ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՀՈՒՅՄԻ ԿԱՄԱՐԸ

Առաքելությունն է՝ նպաստել Հայաստանի Հանրապետությունում փախստականների հասարակական ներգրավվածությանը և հոգեբանական հարմարվողականության գործընթացներին՝ նրանց սոցիալական, տնտեսական և քաղաքացիական իրավունքների պաշտպանության, համայնքային զարգացման ծրագրերի իրականացման, տեղական և մարզային ղեկավար մարմինների, հասարակական հաստատությունների, ձեռնարկատիրական կառույցների հետ համագործակցության ամրապնդման ճանապարհով:

Խնդիրներն են՝  
 • Բնակչության (ծեղներեցներ և գյուղատնտեսություն, տեղական ինքնակառավարում, գյուղական մտավորականություն, երիտասարդություն) կարիքների ու խնդիրների բացահայտում:  
 • Տեղեկություն, գիտելիքների և հմտությունների ձեռք բերման հարցում աջակցություն:

• Համացանցի ու էլեկտրոնային փոստից օգտվելու, ինչպես նաև կրկնօրինակման ու հեռապատմանի հնարավորություն:

• Կուրսերի տարածում այն բեմաներով, որոնց վերաբերում են համայնքների զարգացմանը:

• Դարձնաբացների, կլոր սեղանների, համայնքային քննարկումների, սեմինարների կազմակերպում:

• Համացանցի հնարավորությունների օգտագործում գործընկերային հարաբերությունների ստանդարման և Հայաստանում գործող այլ ռեսուրս կենտրոնների հետ փորձի փոխանակման համար:

• Արտերկրի հետ ակտիվ համագործակցության, կապերի ստեղծում:

**Հիմնարկվել է 2002 թ. մարտի 14-ին:**  
 Կազմակերպության նախագահությանը 12 անգամից կազմված խորհուրդն է:

Իրավաբանական հասցեն՝  
 37 Շիրակի մարզ, Ամասիայի շրջան



Հասցեն Գյումրիում՝  
 Երևանյան խճուղի, Տորվեգական թաղամաս, 39 տնակ  
 Հասցեն Ամասիայում՝  
 Համայնքային գրադարան (2460) 220

Ֆեքս՝ (093) 188 204  
 Էլ. փոստ՝ huysikamar@mail.ru  
 library@web.am

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՄԱԿԱԿԱՆ ՉԵՆՔԵՐՈՒՄՆԵՐԸ

2002 թ. իրականացվել է «Գյուղատնտեսը՝ որպես սերմի բանկ» ծրագիրը, որի նպատակն էր համագործակցությունը գյուղատնտեսությանը զբաղվող փախստական-գյուղացիների աշխատանքային զբաղվածության ապահովման ուղղությամբ՝ բնական վարկավորման անվախ կառույցների ստեղծման միջոցով: Շահառուներն են 29 փախստական ընտանիքները:

2003 թ. ծրագրի մասնակիցների թվում ավելացել է հարևան Ողջի գյուղի 14 փախստական ընտանիքներով: Ծրագրի արդյունքում փախստականների կողմից շահագործվող տարածքներն ընդարձակվել են մինչև 14 հեկտար:

2003 թ. իրականացվել է «Գործարար համայնք» ծրագիրը՝ «Գյուղուրու տնտեսական խորհրդատվության ծառայության» հասնագործակցությամբ: Ծրագրի նպատակն էր փախստականների ներգրավումը մանր ձեռնարկատիրական գործունեության մեջ՝ փախստականների և գործարար կառույցների ու հասարակական հաստատություն-

ների միջև կապերի ձևավորման և զարգացման ճանապարհով: Արդյունքում աշխատանքային երկու խումբ է ստեղծվել Գյուլիբուլա և Ողջի գյուղերում:

2003-2005 թթ. – «Գյուղական երիտասարդական կենտրոն» ծրագրի նպատակն էր նպաստել գյուղաքանակ երիտասարդության ներգրավմանը երկրի հասարակական և գործարար կյանքին՝ մշտական կրթության մեխանիզմ ստեղծելու միջոցով: Ակնկալվող ազդեցությունը Ողջի և հարևան գյուղերում բնակվող շուրջ 80 երիտասարդների կարողությունների զարգացումն ու նրանց ընդգրկումն է հասարակական արդյունավետ գործունեության մեջ:

2004-2006 թթ. – կազմակերպությունը «Ամասիայի համայնքային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպության համագործակցությամբ նախածնեցել է «Ամասիայի համայնքային գրադարանի հիմքի վրա հեռուստահաղորդակցության կենտրոնի ստեղծում» ծրագիրը, որի շնորհիվ հացդղվեց Ամասիայում ավելի քան 40 մարդու համակարգչային գիտելիքներ տալ, կատարելագործել և նոր տեխնոլոգիաներ ներդրել համայնքային գրադարանի աշխատանքում: Համակարգչային դասարանները օգտվում են ոչ միայն երեխաները, այլև ամառաբնակ մեծահասակները՝ ավելի քան 60 մարդ:

2004-2007 թթ. – «Ամասիայի համայնքային գրադարանի հիմքի վրա համայնքային զարգացման նպատակով ռեսուրս կենտրոնի ստեղծում» ծրագրի նպատակն էր Ամասիայի գրադարանի զարգացումը որպես ռեսուրս կենտրոն, որը ցուցաբերում է տեխնիկական, մյութական, խորհրդատվական և այլ ընդլայն անհատական համայնքային կազմակերպություններին և բնակչությանը: Ուսուցիչ կենտրոնը կանոնավոր կերպով ծառայություններ է մատուցում 19 համայնքային կազմակերպությունների, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման, մանր ձեռնարկատիրական, պետական և հասարակական կազմակերպությունների:

Ստեղծվել է գյուղական համայնքի ընդհանուր գրադարան:

Գյումրիում փախստական ընտանիքներին իրավական և սոցիալական աջակցություն է ցուցաբերվում:

2006 թ. – Տորվեգական թաղամասում



ստեղծվել է 22 տնից կազմված «Նորվեգական թաղամաս» համատիրությունը:

2008-2010 թթ. ՈԱԶՄԱԿԱՎԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԳԻՄԱԿԱԿԱՆ ՈՒՂԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամասիայի և Աշոցի շրջանների գյուղական համայնքների առօրյայում հեռուստահաղորդակցության տեխնոլոգիաների ներդրում:

Շիրակի մարզում հասարակական կազմակերպությունների դաշինքի ստեղծում:

Դեռազգա խնդիրներն են՝

քաղաքացիական բաց հասարակության գաղափարի քարոզչություն:

սոցիալական, տնտեսական, քաղաքացիական իրավունքների դիտորդում:

Հեռուստային ոչ պետական առաջնորդների նախապատրաստում:

աշխատանքային խմբերի ձևավորում համայնքային ինքնուրույն հասարակական կազմակերպությունների վերակազմավորվելու հեռանկարով:

«Տեղական իշխանություն-գործարարություն-ԳԿ» միենախյով արդյունավետ համագործակցության մեխանիզմի ստեղծում:

«Հույսի կամար» հասարակական կազմակերպության Գյումրու քաղաքային մասնաճյուղի հիմնում:

«Հույսի կամար» հասարակական կազմակերպությունը 2003 թ.-ից փախստականների հարցերով զբաղվող CRINGO ոչ կառավարական կազմակերպությունների Կոլկաչայան ցանց միջազգային կազմակերպության անդամ է:

### ՍՈՑԻԱԿԱՆ ԶՄԻՆՈՒՄԻ ԽԵՂԻՐ. ԼՈՒՅՍ ԵՏ ԵՆՍԵՆ ՓԱՏՈՒՄԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

## «ՃՇՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԻՆՔԱՆ ՀՊԹՈՒԹՅՈՒՆ Է...»



ՍՈՑԻԱԿԱՆ ՍՈՑԻԱԿԱՆ ՍՈՑԻԱԿԱՆ ՍՈՑԻԱԿԱՆ ԱԿՈՒՆԵՆԵՐՈՒՄ

Սոցիալական քարտերի մասին հակաքարոզական և հակասահմանադրական օրենքի դեմ երկարաև պայքարի արդյունքում ունեցած մեծազույն հաղթանակ

կից հետո, այժմ արդեն հետադարձ հայացք գցելով անցած բազմաշաբաթ ուրու, կրկին ու կրկին հանձնվում ենք, որ, իսկապես, այն, ինչ կատարվեց, իրական հրաշք էր, և որ Սուրբ Գրքի յուրաքանչյուր խոսքը ճշմարտություն է:

Այսօրվա պատկերացմամբ, «ճշմարտություն» հասկացությունը խիստ հարաբերական է, երբեմն և կասկածելի՝ որպես անկյալ մարդու կողմից ընկալվող և մատուցվող իրողություն:

Մինչդեռ իրական ճՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ որոնման ուղին ու ելույթը սպառիչ կերպով մեկնաբանվել են դարեր առաջ՝ լինելով անտարակուսելի բոլոր ժամանակների համար. «Ես են ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը» (Դովհ. 14:6): «Ճշմարտությունը Հիսուսի մեջ է» (Եփես. 4:21):

Մեր օրերում բազմաթիվ են մարդիկ, ովքեր ընտրում են լայն ու դյուրին ճանապարհը, որ դեպի կործանում է տանում, և որքան մեծանում է կեծիծիչն հետևող մարդկանց քանակը, այնքան ղեկավարում է ճշմարտության ճանապարհը ընտրածների ընթացքը:

Բայց ճշմարտությունը ինքնին հարություն է. սրա վառ ապացույցն են սոցիալա-

կան քարտերի մասին մեծազավ օրենքի դեմ պայքարի ընթացքն ու արդյունքները, որն առավել լավ կհասկանան հատկապես նրանք, ովքեր ստեղծվել են այդ բովուլ՝ դեմ հանդիման կանգնելով մարդկային (ավելի ճիշտ՝ անմարդկային) անտարբերությանը, անխղճությանն ու անարդարությանը, դիմակայելով սովի, խտրականությանն ու վարջական կամայականության՝ հաճախ արժանանալով նաև հեզմանքի, արհամարհանքի ու վիրավորանքի:

Երբ թվում է, թե այնև անդառնալիորեն փակ են բոլոր դռները, երևան են գալիս Աստուծո ռոդորմությունն ու մարդասիրությունը: Այդպիսի լույսի եր ման սոցիալական քարտերի դեմ պայքարի ամենամեղակալի պահին՝ Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի պայքարի սպասարեց նլենել այդ փոքրիկ հոտի համար (Մի վախեցիք, փոքրիկ հոտ..., Դով. 12:32), որի միջոցով Աստված խափանեց չարի այս ծրագիրը:

Եվ ճշմարտությունը հաղթեց նորից ու նորից, քանզի այլ կերպ չէր կարող լինել: Առջևում դեռ շատ խոչընդոտներ կան հաղթանարելով, կենդի դեմա շրջապատված ենք ստով, կեծիծիչով, ամբարտավանու-

թյամբ և չարի տարաբնույթ որոնմանով:

Ուրեմն դեռևս շարունակվում է հոգևոր պատերազմը, հետևաբար նաև՝ պայքարը հանուն ճշմարտության:

Որպես ճշմարտության այդ փոքրիկ հաղթանակի վակերպագործություն՝ վերջերս ՀՄԿԿ-ը հրատարակել է «Ասանանարական օրինակներ» վերաբերյալ ակունքներում՝ փաստաթղթերի ժողովածուն, որը յուրօրինակ մի ձեռնարկ է ճշմարտության հաղթանակի հանդեպ թերահավատների տրամադրված, հուսահատ մարդկանց համար: Այն ուղղամտության և արդարադատության կոչ է, զգաստության հրավեր՝ ուղղված իրավապահի և օրենսդիր մարմիններին, ընդհանրապես յուրաքանչյուր պաշտոնյայի:

Բարձր գնահատելով այս ժողովածուի նշանակությունը մարդկային իրավունքների վերակազմման, սահմանադրական օրինակներում հաստատման ուղղությամբ՝ մեք գնահատանքն ու երախտագիտություն ենք հայտնում ՀՄԿԿ-ին՝ հաղորդություն մարդկային իր զործունեության և բոլոր ատավանասանուծ ծրագրերի իրականացման ճանապարհին:

ՍԱՐԳՍԻՄՆ ԳՈՂԿԱՆԻՍՅԱՆ ը. Երևան

# ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏ

## ԵՏՆԵՏՐԱԿԱՆ ԻՐԱԿԱՐԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊՏԱՃԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՈՐՈՋԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՎԵՏՏ ՔԱՅԼԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Հայաստանում հասարակությունը վերջին տարիներից տարված էր կառավարությունից և կառավարման գործընթացներից՝ սոցիալական բեռնաքանդակության, տնտեսական միջոցների և դրանց

հայտնվել է մեկուսացված վիճակում: Իր մեջ կուտակված դժգոհությունը նա չի կարող քննարկել համախոհների հետ, ուստի ստիպված այն տեղափոխում է իր միջավայր, որտեղ դրանք շարունակում են կրել հակամարտ բնույթ: Ընդդիմության ընտրազանգվածում գերակշռում են անկուսակազմակերպչական քաղաքացիները, որոնք իրենց քաղաքական հայացքները ներկայացնում են շրջանակներում քննարկելու և հետագա քաղաքական պայքարի այլընտրանքային քայլերի պլանավորման և իրականացման հնարավորություն չունեն: Այս ընտրազանգվածի շրջանում ստեղծված բարդուհոգեբանական մթնոլորտի երկարատև պահպանումը կարող է ծնել զանգվածային դժգոհությունների ճող սպի:

Այս իրավիճակում առավել խոցելի խումբը երիտասարդությունն է, որն էլ հենց դարձել էր զանգվածային անկարգությունների և բախումների թիրախ: Մինչդեռ առողջ հասարակություններում այն հասարակական-տնտեսական ու քաղաքական զարգացումների հիմքն է: Հայ երիտասարդությունը ևս, ունենալով այդ հզոր ներուժը, այն իրացնելու չափազանց սահմանափակ հնարավորություններ ունի: Ավելին՝ նրա առաջ ծառայած են կրթության, գաղափարախոսության, կառավարման համակարգերում ցածր է նրանց ընդգրկվածության աստիճանը:

Հասարակությանը, այդ թվում նաև երիտասարդությանը հուզող ներկայացված խնդիրները դրված էին կուսակցությունների և նախագահի թեկնածուների ընտրական ծրագրերի հիմքում, սակայն որոշ դեպքերում ակնառու չեն դրանք լուծման ուղիները, որոշ դեպքերում դրանց լուծման ուղիների հարցում առկա է քաղաքական տարակարծություն: Ընտրություններում պարտված թեկնածուի ընտրազանգվածում այս պահին կարծես զրկված է խնդրի լուծման իր տեսլականը երկխոսության ու բանակցության առարկա դարձնելու, քաղաքական որոշումների կայացման և կառավարման գործընթացների վրա ազդեցություն ունենալու հնարավորությունը: Կառավարման գործընթացներից օտարված և որոշակի հասարակական-քաղաքական պահանջարկ ձևավորած հասարակության այս հատվածը, որի թեկնածուները ընտրություններում պարտվել է, կարծում է, որ ինքն իր խնդիրների հետ մղված է միայնակ, անպաշտպան և չհիմնարկված երկրի հասարակական-քաղաքական կյանքին:

Դա պայմանավորված է նրանով, որ որոշում կայացողների վրա ներազդելու միակ ժողովրդավարական միջոց ճանաչվում է ընտրական գործընթացը: Զարգացած ժողովրդավարական երկրներում հասարակական համերաշխության ձևավորման, պետական քաղաքականությունների և որոշումների ընդունման վրա ներազդելու նպատակով արդյունավետորեն կիրառվում են հասարակական գործընթացների և պետական կառավարման մասնակցային հաստատությունները, որոնք գործում են համայնքային մակարդակից մինչև պետական կառավարման ցանկացած կառույցի, այդ թվում նաև Ազգային ժողովի մակարդակում՝ իրական հնարավորություն ստեղծելով հասարակության փորձաքննություն կազմած քաղաքական կուսակցությունների և նրանց ընտրազանգվածի, հասարակական խմբերի համար իրենց ծայր լսելի դարձնելու և շահերի պաշտպանության համար: Մեր հասարակությունում բավական չեն գործում ժողովրդավարական այս հաստատությունները, ուստի հասարակությունը չի կարողանում օգտվել դրանց ընդունման հնարավորություններից: Դա պայմանավորված է նրանով, որ հասարակությունը հստակ չի պատկերացում այդ հաստատությունների դերն ու ազդեցությունը քաղաքականության ընդունման գործընթացում և մասնակցությանը:

Երկրայացված միանգամայն իրագործելի է այսպես օրինակ՝ ԱՅԻԾ-ի, ԱԺ-ի, Մանիպարությունների կից խորհուրդների, երիտասարդական-մշակութային կենտրոնների գործունեության շրջանակներում հանրային մասնակցության արդյունավետության բարձրացմանը նպաստելու, մասնակցային հաստատությունների հզորացման, ինչպես նաև նրանցում քաղաքական ընդդիմության ներկայացուցիչների ներգրավման խրախուսման միջոցով կարող է դառնալ որոշումների կայացման գործընթացում հասարակությունում առկա տեսանկյունների և մարդկային ռեսուրսների ներգրավման և ժողովրդավարության ապահովման իրական երաշխիք, ինչը հասարակության մեջ կբարձրացնի վստահությունը կառավարության և կառավարման գործընթացների նկատմամբ: Միաժամանակ անհրաժեշտ է նաև արդյունավետորեն կիրառել հասարակական գործընթացների և պետական կառավարման մասնակցային հաստատությունների դերի և ազդեցության հնարավորությունների մասին հասարակական կարծիքի ձևավորմանն ու իրավագիտակցության բարձրացմանը:

Նշված հարթակները հասարակական երկխոսության և կառավարման գործընթացների ընդդիմության մասնակցության իրականացման համար իրական մեխանիզմներ են, որոնց կիրառման ապահովելու նպատակով նախապես անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ հասարակությունում առկա բարդուհոգեբանական մթնոլորտի առողջացման համար: Միաժամանակ անհրաժեշտ է նաև ստեղծել հասարակական գործընթացների և պետական կառավարման մասնակցային հաստատությունների դերի և ազդեցության հնարավորությունների մասին հասարակական կարծիքի ձևավորմանն ու իրավագիտակցության բարձրացմանը:

Կարևոր է, որ այս ամենի իրականացվող հասարակական նշված հատվածի շրջանում իրենց թեկնածուից ակնկալիքների, երևցողության գործընթացների վերաբերյալ վերջիններիս քաղաքական պահանջների շուրջ երկխոսության պատրաստակարար ձևավորման և վերջիններիս կողմից նախաձեռնությունների խրախուսման միջոցով:

Հաշվի առնելով, որ երիտասարդների հասարակական միջավայրը ներառում է ընտանիք, ընկերային, ուսանողական, աշխատանքային և անգամ կուսակցական օղակներ, վերջիններիս մտ խորհուրդական գործընթացներն ակնհայտորեն որոշակի բացասական ազդեցություն են թողնելու իրաքանակի քաղաքական և քաղաքացիական ակտիվ դիրքորոշման ու վարքագծի, ինչպես նաև հասարակական միջավայրում անձնական փոփոխարեությունների ու հոգեվիճակի վրա: ➔ էջ 5

### ՎԱՆԱԶՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՐՁԱՐԿՎԵՏ ԳՆԱՎՈՐՄԱՆ ԲԱՆԱԿԱՐԿՆԵՐԻ ՆՎԻՐԱԾ ԱՎՏՈՐՈՒՄԸ

2008 թ. ապրիլի 10-ին տեղի ունեցավ ՀՅԻԿ-ին վիճակագրական տվյալների մարդատար ավտոբուսի փորձարկումն ու այդ կապակցությամբ կազմակերպված հանդիսավոր արարողությունը Շ. Ազնավուրի անվան մշակույթի պալատին հարող տարածքում:

Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը 2007 թ. նոյեմբերի դեպի էր Վիեննայի քաղաքապետի խնդրով աջակցել մարդատար ավտոբուսի տրամադրման հարցում՝ Մարտի իրավունքների հայկական դպրոցի սովորողների և «Բյուրակ» կրթահամալիրի աշակերտների համար: Վիեննայի քաղաքապետ Գրեգոր Միշելի Հեկիմ Նամակին դրական էր արձագանքել պատրաստակամություն հայտնելով անհատույց ավտոբուս մկրի: 2008 թ. Վիեննայի քաղաքապետարանի և Ավստրիայում Հայաստանի դեսպանատան ակտիվ համագործակցությամբ և մեծ քանակի շնորհիվ բանկարժեք մկրն արդեն Վանաձորում է:



Օրերս այդ ավտոբուսի փորձարկումը տեղի ունեցավ Վանաձորում՝ ՀՅԻԿ աշխատակիցների, «Բյուրակ» կրթահամալիրի ուսուցիչների և սաների մասնակցությամբ: Հանդիսավոր արարողությանը հրավիրվել է մասնակցում էին Լոուի փոխմարզապետ Արվան Վարդեղյանը, Վանաձորի փոխքաղաքապետ Նորիկ Սարգսյանը, Վանաձորի քաղաքապետարանի մշակույթի բաժնի վարիչ Ա. Աղաբաբյանը, Ավստրիայում Հայաստանի դեսպանատան ներկայացուցիչ Էդմոնդ Յերմանը և այլք: Ողջունելով ներկայից ՀՅԻԿ նախագահ Գ. Մանուկյանը մասնակցության ասաց. «Այսօր ՀՅԻԿ աշխատակիցների, «Բյուրակ» կրթահամալիրի մանկավարժների և աշակերտների համար տոնակա օր է, քանզի Վիեննայի քաղաքապետը մեր գեղեցիկ, բանկահան մկրատություն է կատարել, ուստի մեր երախտագիտության խոսքն ենք հղում Վիեննայի քաղաքապետին և նրա աշխատակիցին, Ավստրիայում Հայաստանի դեսպան Ալեո Յոլակի՝ Մանուկյանի, դեսպանատան աշխատակիցներ Արտակ Հովհաննիսյանին, Էդմոնդ Յերմանին, ում ջանքերի շնորհիվ Վիեննայի ավտոբուսը փոխարկվել է Հայաստան: Ընդհանրվում են բոլորին, հատկապես երեխաներին և վանաձորցիներին, քանի որ ավտոբուսը ծառայում է նրանց»:

Ավստրիայում Հայաստանի դեսպանատան ներկայացուցիչ Էդմոնդ Յերմանը ջերմորեն ողջունեց և շնորհավորեց բոլորին՝ հույս հայտնելով, որ ավտոբուսի շահագործումը կնպաստի կազմակերպության ծավալման գործունեությանը՝ առավել շուրջակից ձեռքբերումների հասնելու նպատակով:

Իր ողջունի խոսքում Լոուի փոխմարզապետ Ա. Վարդեղյանը երախտագիտություն հայտնեց ՀՅԻԿ նախագահին և աշխատակիցներին կարևորագույն նախաձեռնության իրականացման համար՝ կանխելով, որ յուրաքանչյուր եր իր քաղաքի և ժողովրդի բարօրության համար նպաստավոր գործունեություն ծավալելու կարողություն ունենա, և մասնակցության ճեջ. «Ընտրականությունը Ավստրիայի մեր բարեկամներին, որ անսասել են մեր խնդրանքին՝ միջոցներ ու ժամանակ տրամադրելով այս ձեռնարկման իրագործման համար»:

Ճեջած շնորհավորական խոսքերին իր ջերմ ողջունը ավելացրեց նաև Վանաձորի փոխքաղաքապետ Նորիկ Սարգսյանը: Կազմակերպված միջոցառումը եզրակարգվեց «Բյուրակ» կրթահամալիրի աշակերտների ելույթներով, իսկ հրավիրյալներն անփորձեղ երթևեկություն մարզեցին Վիեննական ավտոբուսին:

Ու Շ Ա Դ Ի Ու Թ Յ Ու Ն



Մարդու իրավունքների հայկական դպրոցը հայտարարում է ընդունելություն հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման 2008-2009 թթ. մեկամյա դասընթացի համար:

Դասընթացի նպատակը իրավական առարկաների «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք» ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձրացումն է՝ տեսական գիտելիքների և մեթոդական հմտությունների բարելավման միջոցով:

Ուսան ընթացքում սովորողներն ապահովվում են անհրաժեշտ գրականությամբ, օգտվում ՀՄԻԿ Մարդու իրավունքների գրադարանային ցանցի ծառայություններից:

Դպրոցը հաջողությամբ ավարտելու դեպքում սովորողն ստանում է վկայական իրավական առարկաների մասնագետի որակավորմամբ: Ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով:

Դիմել կարող են Հանրակրթական դպրոցի այն ուսուցիչները, ովքեր.

- դասավանդում են «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք» ուսումնական առարկաները.
- սկսած 2008-2009 ուստարվալանից՝ առնվազն 2 տարի պետք է դասավանդեն

իրավական առարկաները:

ՀՄԻԿ-ը հոգում է հետևյալ ծախսերը.

1. բնակավայր-Վանաձոր, Վանաձոր-բնակավայր ուղեվարձերը (վճարման համար հինգ քմ հանդիսանում ուղեկտրոնները).
2. սնունդ.
3. կացարան:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում-հարցաթերթիկ.
- Ուսումնական հաստատության ղեկավարի կողմից տրված հարցաթերթիկ-երաշխավորագիր.
- Ինքնակենսագրություն (CV).
- Բուհի ավարտական վկայականի պատճեն.
- Հարակից այլ դասընթացների (սեմինարների) մասնակցության վկայականների պատճեններ (եթե կան):

- Անձնագրի պատճեն.

- 3/4 չափի մեկ լուսանկար (հեռապատճենով և էլ. փոստով ուղարկված լուսանկարներ չեն ընդունվում):

Փաստաթղթերից որևէ մեկի բացակայության դեպքում դիմումը չի քննարկվում: Դիմում-հարցաթերթիկը և հարցաթերթիկ-երաշխավորագիրը կարելի է ստանալ [www.acrpc.am](http://www.acrpc.am) համացանցային էջից կամ ՀՄԻԿ գրասենյակից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել ոչ ուշ, քան մինչև 2008 թ. մայիսի 16-ը, հետևյալ հասցեով՝

Հայաստանի Հանրապետություն  
ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նր-  
բանոց, փվ 2  
Հեռախոս՝ (322) 22967, 44781  
Հեռապատճեն՝ (322) 44781  
Էլ. փոստ՝ [acrpc@acrpc.am](mailto:acrpc@acrpc.am)  
[aparykian@acrpc.am](mailto:aparykian@acrpc.am)

Մարդու իրավունքների հայկական դպրոց

2008 թ. հուլիսի 1-10

ԴԻՄՈՒՄ-ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

1. Ազգանուն, անուն, հայրանուն \_\_\_\_\_
2. Ծննդյան փվ \_\_\_\_\_  
տարին \_\_\_\_\_ ամիսը \_\_\_\_\_ օրը \_\_\_\_\_
3. Հասցե \_\_\_\_\_
4. Հեռախոս \_\_\_\_\_ Հեռապատճեն \_\_\_\_\_  
էլ. հասցե \_\_\_\_\_
5. Կրթությունը \_\_\_\_\_

Ուսումնական հաստատությունը	Բաժինը	Մասնագիտացումը	Ընդունման տարեթիվը	Վկարտման տարեթիվը

6. Աշխատավայրի լրիվ անվանումը, հասցեն (մարզը, համայնքը), հեռախոսահամարը, հեռապատճենը, էլ. հասցեն. \_\_\_\_\_
7. Նախկինում իրավական ոլորտի ի՞նչ դասընթացների, սեմինարների եք մասնակցել: \_\_\_\_\_

Հրավիրող կազմակերպությունը	Դասընթացի/սեմինարի անվանումը	Սկիզբը	Ավարտը

8. Ինչու՞ եք դիմում: Ի՞նչ եք ակնկալում Մարդու իրավունքների հայկական դպրոցից (շարադրել համգամանորեն, անհրաժեշտության դեպքում կարելի է ավելացնել լրացուցիչ թերթ) \_\_\_\_\_
9. Իրավական ոլորտի ի՞նչ հարցեր են Ձեզ առավելապես հետաքրքրում \_\_\_\_\_
10. Ձեր պատկերացմամբ՝  
ա) Ինչու՞ է անհրաժեշտ Մարդու իրավունքների կրթությունը \_\_\_\_\_  
բ) Ո՞րն է անհատի դերը քաղաքացիական հասարակության մեջ \_\_\_\_\_  
գ) Ինչպիսի՞ հարաբերակցություն եք տեսնում Մարդու իրավունքների և նրա պարտականությունների միջև. \_\_\_\_\_

Անհրաժեշտ է Ձեր ընտրությամբ վերոհիշյալ կետերից մեկի թեմայով ներկայացնել մինչև կես էջ ծավալով շարադրություն (տես):

11. Ի՞նչ համգամանքներ կարող եմ խոչընդոտել մեկամյա դասընթացին Ձեր կանոնավոր հաճախելուն \_\_\_\_\_

12. Ունե՞ք արդյոք որևէ առանձնահատուկ շօրիմակ կենցաղային, առողջական և այլն) կարիք կամ պայման, որոնք կցանկանայիք, որ հաշվի առնվեն Ձեր ուսման ընթացքում: \_\_\_\_\_

Տարի, ամիս, ամսաթիվ \_\_\_\_\_ ստորագրություն \_\_\_\_\_

← էջ 4

Օգտակար կլինի, եթե բուհերում, երիտասարդական-մշակութային կենտրոններում և երիտասարդության հարցերով զբաղվող ՀԿ-ների կողմից կազմակերպվեն ետևընթացյալ գործընթացների ազդեցության և դրանց հետևանքների վերացման վերաբերյալ քննարկումներ և բանավեճեր: Միաժամանակ պետք է ձեռնարկվեն քայլեր՝ բարձրացնելու երիտասարդության իրազեկությունն ու իրավագիտակցությունը հասարակական գործընկերության, կառավարման մասնակցային հաստատությունների գործունեության մասին, ինչպես նաև նպաստելու նրանց ներգրավվածությանը նշված հաստատություններում տեղի ունեցող գործընթացների:

Սեանց այս և նմանօրինակ միջոցառումների մեր հասարակությունում քաղաքական և քաղաքացիական կարվածության, անհանդուրժողականության, դժգոհության և օտարացման մթնոլորտը չի վերանա, ինչը կխոչընդոտի ոչ միայն պետություն-անհատ, այլև անզամ քաղաքացիների միջանձնային հարաբերությունների կանոնակարգումը, հետևաբար նաև՝ վերջիններիս կայուն զարգացումը:

ԹՍՄԱՐԱ ԱԲՐԱՂԱՅԱՆ  
«Արագ» ՀԲԿ նախագահ

Հարցաթերթիկ-երաշխավորագրի ձև

Հարգելի՛ տնօրեն  
Խնդրում ենք լրացված հարցաթերթիկ-երաշխավորագիրն ուղարկել Մարդու իրավունքների հայկական դպրոց:

- 1.1. Մարզ \_\_\_\_\_
- 1.2. Քաղաք (գյուղ) \_\_\_\_\_
- 1.3. Ուս. հաստատության հասցեն \_\_\_\_\_
- 1.4. Հեռ. \_\_\_\_\_
- 1.5. Էլ. հասցե \_\_\_\_\_
- 1.6. Տնօրեն \_\_\_\_\_  
Անուն, հայրանուն, ազգանուն

- 2.1. Դիմորդի/ուսուցչի անունը, ազգանունը \_\_\_\_\_
- 2.2. Որքա՞ն ժամանակ է աշխատում Ձեր ուս. հաստատությունում \_\_\_\_\_

3. Ըստ Ձեզ՝ որքանո՞վ է անհրաժեշտ դիմորդի՝ Մարդու իրավունքների հայկական դպրոցում ուսանելը \_\_\_\_\_

4. Խնդրում ենք բնութագրել դիմորդին՝ որպես մանկավարժի \_\_\_\_\_

5. Խնդրում ենք գնահատել դիմորդի հմտությունները հետևյալ հատկանիշներով (5-Գ՝ ամենաբարձր, իսկ 1-Գ՝ ամենացածր գնահատական է).

Գնահատական	1	2	3	4	5
Հատկանիշը					
Լիդերություն/առաջնորդություն					
Նպատակավարություն և եռանդ					
Հաղորդակցման հմտություններ					
Աշակերտների հետ աշխատելու կարողություն					
Ընդհանուր գնահատականը					

Երաշխավորագիր

Սույնով հաստատում եմ, որ ուսուցիչ/ուսուցչուհի \_\_\_\_\_  
անուն, հայրանուն, ազգանուն

Մարդու իրավունքների հայկական դպրոցում սովորելու գույառի, ինչպես նաև դպրոցն ավարտելուց հետո ոչ պակաս 2 տարի անընդմեջ կդասավանդի «Իրավունք» առարկայաշարը կամ նրանում ընդգրկված որևէ առարկա:

Ստորագրություն \_\_\_\_\_ Կ.Տ. \_\_\_\_\_ Տարի, ամիս, ամսաթիվ \_\_\_\_\_

ՀՀ ԿԳԻՄ ՊԵՏԱԿԻՐԱՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱՏՈՒՆԱԿԱՆ ԱՅՅԸ ԱՄԲԱՔՈՒՐԳ

ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվիրակությունը, ԿԳ նախարար Լ. Սլրոյանի գլխավորությամբ, ապրիլի 3-4-ը պաշտոնական այցով գտնվում էր Ատրապեղում, որտեղ հանդիպումներ ունեցավ Եվրախորհրդի բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Հայաստանից ժամանած հյուրերին ընդունել են Եվրախորհրդի գլխավոր քարտուղար Թերի Դևիսը, խորհրդարանական վեհաժողովի կրթության, գիտության և մշակույթի հանձնաժողովի քարտուղար Ժառ Արին:

Հայկական պատվիրակությունը հանդիպել է նաև հանրակրթության, արտադրող-ցական և բարձրագույն կրթության տնօրինության ներկայացուցիչների հետ:



ՄՇԱԿՈՒՅԹ

ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿԻՆՈՍԱՐՈՒՄԻ  
ՀԻՄՆԱԳԻՐ ՀԱՆՃԱՐԸ

Ոչխարի հողը անցնում է բունելով: Չանդի պալատը ուղղությամբ ավտոմեքենաներ են: Խցանում է: Ավտոմեքենաների, ոչխարների, հովվաշների ու հովիվների միախառնված ուղվագծերը խավարում հազվեց են նշանաբան: Շարժիչների հեռուցում, ոչխարների մայրուն, մարդկանց բացալակնչություններ, տեղում պատվող անվարողների աղմուկ, ծուխ... Այս դժոխային, տագնապահարույց իրարանցումից հանդիսատեսը լարվում է շջջատուր լինում: Երբ վերջապես, հողը մտնում է բունելի ելքին, լույսի պայծառ շողերից էկրանը լուսավորվում է, հանդիսատեսն այն ընկալում է որպես LNF3U, որպես եԼԵ: Ի՛նչ է սա, եթե ոչ մաքրագործում՝ ուղեկցված «Ֆիզիկական գազախանութներ»-ից ողորդված գազայինանոթային անցմամբ: Երաժշտությունը լուսանում է, այլ արվեստի ելությունը, հոգին: Երաժշտությունը ու արվեստի համարդավում են, առես երաժշտությունն ստեղծվել է արմուկից գուլպա հեցյուններից:

Արտավազ Փելեշյանը ծնվել է 1938 թ. Լեհինակաճում, մանկությունն է երիտասարդության տարիներն անցել են Կիրովականում: «Տարբեր տարիների տարբեր պատմաններով քս սովորեցի տարբեր դպրոցներում. երկի քաղաքում հասակակիցներից շատերը եղել են իմ դասընկերներ»: Կարոցն ավարտելուց հետո աշխատել է «Ավտոմատիկա» գործարանում՝ սկզբում որպես գծագրող-նկարիչ, ապա տեխնիկ-կոնստրուկտոր: 1963 թ. արձակուրդ է վերցնում և ամենքից գալուցի մեկնում Մոսկվա, որտեղ էլ ձակատագրի բերունով հանդիպում է իր ապագա ուսուցիչներին՝ Լեոնիդ Կրիտսինին, Սերգեյ Չերնասինովին և մյուսներին, ովքեր օգնում են ապագա ռեժիսորին ընդունվել Կինոմատոգրաֆիայի համամիութենական պետական ինստիտուտ:

Մ. Փելեշյանը մի շարք ֆիլմերի հեղինակ է՝ «Գիշերային պարիսպ» (1964), «Մարդկանց երկիրը» (1966), «Ակիզ» (1967), «Մենք» (1969), «Բնակիչներ» (1970), «Տարվա եղանակները» (1975), «Մեր դարը» (1984) և այլն: Փելեշյանի ֆիլմերը, չնայած սև ու սպիտակ էկրանավորմանը, խոսում են, գրավիչ հնչողություն ունեն. նրա ֆիլմերում խոսում են քարերը, երկինքը, կենդանիները, բնությունն ինքն:

Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստ,  
միջազգային մրցանակների դափնեկիր, տարածական սարունի (մոնտաժ)  
հիմնադիր, կինոռեժիսոր  
**ԱՐՏԱՎԱԶՔ ՓԵԼԵՇՅԱՆԻ Ծննդյան 70-ամյակի առթիվ**

Մ. Փելեշյանին անվանում են վավերագրական կինոյի բեմադրիչ, որը միայն ասիանամակարում է նրա գործունեության շրջանակները, քանի որ նրա համար փաստը նպատակն է, այլ միայն նյութ: Փելեշյանի ֆիլմերը ներգործում են նախ մարդու ենթագիտակցության վրա, ինչպես երաժշտությունը. դրանց չեն ստեղծվողիվում ավանդական ժանրի շրջանակներում: «Տարվա եղանակները» ֆիլմը բնության և մարդու պայքարի մասին է. այն դիտելիս մարդ լարվածությունից չունչը պահած հետևում է ընթացքին: Ռեժիսորի համաճարերությունը դրսևորվում է նրանում, որ կարողանում է դիտողին հարողել այն, ինչ կանխավ գամկացել, մտածել էր: Փառաջանունի խոսքերով՝ Փելեշյանը կինոհամաճար է, քանզի նրան հաջողվում է այդքան խորությամբ այնքա՛ն շատ բան ասել: Կինոքննադատները Փելեշյանին համարում են մոնտաժային կինոյի իսկական պոետ: Նրա ֆիլմերը պոետներ են կյանքի, մարդու ներքին հակամարտ բնույթի ու բնության տարբերների դեմ մղած կռիվի, պայքարի, հավերժության, երկրի, հարազատների նկատմամբ տածած սիրու մասին, ուստի համամարդկային են: Նրա արվեստը հասկանալի է մոլորակի ցանկացած անկյունում ապրող մարդու համար. բոլոր մեծ արվեստագետների պես նա էլ իր կերպարները կերտում է հանդիսատեսի համահեղինակությամբ:

Ստեղծագործական գործունեության ճանապարհին աստիճանաբար փոխվում են թեմաները, մինչդեռ անմոխուխ են մնում նրա պոետիկայի սկզբունքները, որոնց զարգանում են՝ դրսևորվելով նորանո, անսպառ հնարավորություններով:

Պրեյնայի առիթով աս գրուցելի ռեժիսորի արվեստակից ընկերների հետ:

Սոֆիլ Սարգսյան (կինոդերասանուհի) – Ի՞նչ համար մեծ երջանություն, սպաով էր նրա նման մարդկանց հետ շվիվել: Այնքա՛ն արվեստ կար այդ ամենի մեջ...

...Երբ Մայանին հարցրինք, թե «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմում ո՞վ է Ռևազի դերակատարը, պատասխանեց՝ մեր մեծանուն, նույնիսկ համաշխարհային ճանաչում ունեցող ռեժիսորներից մեկը: Իսկ այն ժամանակ շատերիս մեջ տարակուսանք կար, թե ո՞վ է այս մարդը փայլուն դերասանական աստղաբույլի մեջ:

Տարիներ անց Փելեշյանը ի՞նչ բացատրեց, թե ի՞նչ է մոնտաժը. այն համարում էր տեսարանները: Իսկ Փելեշյանը ոչ թե մոնտեճում, այլ տարանջատում է կարդերը, բայց այդ բացառում այնքա՛ն հուզական տեսարան է ներկայացնում, որ մի քանի կարճ պահեր անց հասունանում են. նա արձայա շարժանկարի ընթացքն ընդմիջում է նույն տեսարանով, որն արդեն տեսնում, զգում, ապրում ենք նորովի, հասում հայացքով:

Այսօր Մ. Փելեշյանը դասավանդում է և՛ Փարիզի, և՛ Գերմանիայի կինոակադեմիաներում: Ամբողջ աշխարհում ուսուցանում են Փելեշյանի մոնտաժի հմտությունները: Մ. Փելեշյանը դրվատում այն, ինչպես ժամանակին էլեգանտից մոնտաժը:

Փելեշյանը մեծագույն հայ է, ում աշխարհը ճանաչում ու գնահատում է:

Սուրեն Դանսիկյան (կինոգետ, պրոֆեսոր) – Մ. Փելեշյանն, անշուշտ, եզակի արվեստագետ է ոչ միայն հայ, այլև համաշխարհային կինոյի ասպարեզում:

Չիղում եմ՝ 1967 թ. Գայֆիմում խմբագիր էի աշխատում, երբ իմ առաջին, որ մի հայ ամսագիր է եղել Մոսկվայի Կինոմատոգրաֆիայի համամիութենական պետական ինստիտուտի՝ ցուցադրելու կուրսային աշխատանք ֆիլմը՝ մեկ մասից կազմված: Անասելի տպավորություն բոլրեց: Ֆիլմը կոչվում էր «Սկիզբ», որում մոնտաժված էր ամբողջ 20-րդ դարը: Դիտման ընթացքում հասկացա, որ տեսնում, զգում ու ապրում ենք մի երևույթ, որն անբացատրելի, անկարագրելի է, ավելիք, քան ընդամենը շարժանկար: Ուսանողը Փելեշյանն էր՝ լուռեցի մի երիտասարդ՝ համեստ արտաքին:



Մ. Փելեշյանը:

Մեզավ մեկ-երկու տարի, որոնք նրա համար նշանակալից են բարձրակարգ ստեղծագործություններով, որոնք դեռևս ուսանողական աշխատանքներ էին: Գետն ծնվեց «Մենք ենք, մեր սարերը», որը նոր շունչ, բարմություն էր բերում: Ես տեսա մեր երեք մեծերի թաղման արարողություններից մոնտաժված կարդեր: Ավետից Իսահակյանի, Դրաշյան Երբիսյանի և Վահրամ Փափազյանի հուղարկավորությունների՝ ժամանակի մեջ միմյանցից հեռու արարողությունները գաղափարի, բովանդակությամբ ու ազգային իդեոյի միասնականությանը համարված ու միավորված: 20 տարի անց՝ 1988 թ., հայ ազգը պիտի միավորվեր, բռունցքերը Ազատության հրապարակում: Այն, ինչ իրավունքային մեջ դեռ կար, Փելեշյանի գիտակցության մեջ արդեն ձևավորվում էր: Սա արվեստն է...

1994 թ. մեզ հրավիրել էին կինոփառատոնի: Օրագրում ընդգրկված էին նաև Արտավազ Փելեշյանի երկու մոր ֆիլմերը՝ «Վերջ»՝ 9 ռոպե, և «Կլանքը»՝ 6 ռոպե ստեղծություն: Դառիճը լեկ-լեզուն էր. ես չեմ կարող նկարագրել իմ ապրումները, տպավորությունները, այն, ինչ կատարվեց դառիճում ֆիլմերի դիտումից հետո: Դրանց ցուցադրությունը տե՛սք ընդամենը 15 ռոպե, իսկ դառիճում հնչած ծափահարությունների «հրդեհը»՝ 30 ռոպե: Դառիճը հոտակալ իր հիացնումներ էր արտաստում և խնդրում կրկնե՛ս... Իսկ Արտավազ Փելեշյանը՝ առաջին անգամ տեսա հուզված ու շրիթված...

ՄԱՐԻՆԵ ՄՆԻԹԱՐՅԱՆ ԵՅՈՒՐԻ դասախոս

Անասյան

ԱՐՏԱՎԱԶՔ ԾՆՈՒՆԳՆԵՐԻ ԹՎՈՎ  
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԿՐՈՐԳՆ Է ԱՊՀ ՏԱՐԱԾԱՆՐՋԱՆՈՒՄ...

2008 թ. հունվարի 15-ին Հայաստանի Հանրապետության շուրջ 40 հասարակական կազմակերպություններ ուղերձ էին հղել Նախագահական ընտրություններում առաջադրված թեկնածուներին՝ մտահոգություն հայտնելով Լռուս մարզի Թեղուտի պղնձամոլիբդենային լեռնահարստացուցիչ կոմբինատի զորնարարության և Թեղուտի անտառտարածքը որպես պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործելու հետագա հնարավոր կործանարար կետևանքների վերաբերյալ, խնդրելով կանխել վտանգավոր ձեռնարկումը, որը թեև կարող է առաջիկայում՝ ընդամենը մի քանի տասնամյակ, եկամտաբեր, շահույթ ապահովող ձեռնարկում լինել, սակայն վնասակար հետևանքները հարկաք չեն սպասեցնի: Այս և մյուս բոլոր հայ-զգուշացումներն անտեսել էին, և կառավարությունն այնուամենայնիվ ռ

րոշել է շահագործել հանքավայրը: Հանքավայրի շահագործումը վտանգավոր է անընդունելի համարող հասարակական կազմակերպությունները խնդիր հիմնավորում էին նաև նրանով, որ Թեղուտի հանքավայրի շահագործումը հակասում է ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված մի շարք օրենքների, միջազգային համաձայնագրերի:

Իսկապես, անդառնալի տխուր հետևանքներ կարող է ունենալ հանքավայրի՝ առանց հանգամանակից հետազոտության շահագործումը՝ սրելով Հայաստանի և նրա առանձին շրջանների բնակչության առջև ծառայած առողջապահական խնդիրները:

Իսկ իրականության պատկերը հետևյալն է: Ըստ «Ե՝Մի-Փի» ընկերության

աշխատանքային ճախագծի՝ հանքավայրի շահագործման հետևանքով հատվելու է 170.833 ծառ, այդ թվում՝ հազարավոր հազվագյուտ ծառեր: Ակնկալվում է հանքը շահագործել 30-40 տարի՝ տարեկան 30.000 տոննա պղնձի և 800 տոննա մոլիբդենի խտանությունը արդյունահանմամբ: Այս պահին կարևորվում է շուրջ 1.700 մոր աշխատատեղերի հիմնումը, որի կարիքը բնակչությունն ունի, մինչդեռ անտեսված են գալիք սերունդների շահերը, հեռանկարում սպասվող հետևանքների մասին մտահոգիչ զգուշացումները, սահազանքը:

Խնդիրը նաև այն է, որ Հայաստանի Հանրապետությունում արտանետումներն ու բուժանջարկատների հետևանքով գնալով արժու է արտավոր ծնունդների ծանկար: Մամական Ավադեղուր և հարակից բնակավայրերի շրջանում նման

արտաները մեծ թիվ են կազմում: Ըստ ՀՀ բնապահպանության Նախարարության տվյալների՝ Ավադեղուր գործող «Ե՝Մի-Փի» ընկերության պղնձամոլիբդենային կոմբինատի վնասակար նյութերի արտանետումները (ծծմբի երկօքսիդ, կապար, ցինկ, արսեն) մի քանի անգամ գերազանցում են սահմանված նորմաները: Առողջապահության Նախարարության տվյալները վկայում են այն մասին, որ եթե 1988 թ. 100 հազար բնակիչ հաշվով բնածին արտանետվող և շեղումներով ծնունդների ցուցանիշը 84.8 էր, ապա 2005-ին արդեն հասել է 125.7-ի:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության 2005 թ. հաշվետվության համաձայն՝ ԱՊՀ տարածաշրջանում Հայաստանը զրկվածանից հետո արտավոր ծնունդների և համանման խնդիրների թվով երկրորդն է:

Հոգևոր

ՄԱՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌՍԵՐԸ՝ ԿՅՎՆՔԻ ԱՂՔՅՈՒՐ

Գարնանային տոների բույլի մեջ Ա. Զատիկից հետո առանձնանում է Ավետման տոնը՝ իբրև արտարուխ ծնունդ մայրությանը, գեղեցկությանը ու սիրուն: Երեք սքանչելի խորհուրդ՝ ծուլված միմյանց: Հարության և մայրության տոները գարնան զարթոնքը կախարհանք են դարձնում՝ վերածննդի և ծաղկանք բերկրանքով լցնելով մարդկանց հոգիները, մոլոր են իմաստավորել երևայրները, ճանաչել ու գնահատել ճշմարիտ արժեքները և արժեքներից գեղեցկագույնը՝ մայրությունը:

Ավետման տոնն անշարժ տոն է և ամեն տարի նշվում է ապրիլի 7-ին, որը հիշատակություն է Գաբրիել հրեշտակի՝ Մարիամին հաղորդած ավետիսի. «Ուրախացի՛ր, ով շնորհիմնակա, Տերը քեզ հետ է» (Ղուկ. 1:28): Եվ ապա՝ «Մի վախեցի՛ր, Մարիամ, որովհետև Աստուծոց դու շնորհ գտար: Եվ ահա՛ դու կդրոնաս և կծնես մի որդի ու նրա անունը Հիսուս կդնես: Եւ մեծ կլինի և Բարձրալի որդի կլնույր: Եվ Տեր Աստված նրան կտա նրա հոր՝ Դավիթ արքայի, և նա հավիտյան կթագավորի Հավիթի տան վրա, ու նրա թագավորությունը վախճան չի ունենա» (Ղուկ. 1:30, 31, 32, 33):

Սիրոտի Մարիամ, անապական փառար և կենսաբուր Լուսյան ծնող և մայր. Օրինյալ ես դու կանանց մեջ, Բերկրյալ Տիրամայր և կույս: Սահակյուզպ Մյունեյի

Նա կոչվեց Աստվածածին ու Աստվածամայր, քանզի նա անբարատ ու անապական լույս էր, ու Լույսը՝ Փրկիչը, նրանից ծնվեց: Մարիամից՝ որպես լույսի առատ աղբյուրից, հեզություն, պարկեշտություն, խնձարիություն ու սեր էր բխում: Նա շնորհալի էր ու շնորհ գտավ Աստծո կողմից, աստվածասեր էր, աստվածավախ և Աստծո քնակարանը դարձավ. Աստծո միածին Որդին մարմնացավ, մարդոջացավ նրա միջոցով:

Մարիամը հնագանդվեց Աստծո կամքին՝ ասելով. «Անավասիկ, ես մոռու եմ տիրոջ աղախինքը, թող քո խոսքի համաձայն լինի ինձ» (Ղուկ. 1:38):

Սուրբ Տիրամայրը, որ գեղեցիկ էր մարմնով, հոգով ու վարքով, փառաբանվեց, սրբացվեց ու պաշտվեց բոլոր սրբերից առավել: Նրան աղոթեցին ներյալները, նրա բարեխոսությունն առ Աստված աղերսեցին կարոտյալները, նրանից գուր ու խաղաղություն խնդրեցին խեղձված

ները: Աստվածամայրը դարեր շարունակ ոգեշնչել է հավատացյալներին: Բազում մայրեր ու աղջիկներ ջանացել են նրան նմանվել՝ նրա վեհ ու կատարյալ պատկերը սրբորեն կրելով իրենց սրտերում: Իսկ հայ օջախներում մայրությունը եղել է աստվածային օրհնություն, մայրը մեծարվել ու գնահատվել, մինչև անգամ սրբացվել է:

Ավետման և մայրության տոնը գեղեցկություն և սիրո հանդես է, քանզի մայրությունն ինքնին գեղեցկություն է. չէ՛ որ մայրամալով կիցն արարման խորհուրդն է կրկնում՝ դրանով առնչակից դառնալով Կրարիչ-Աստծուն:

Աստվածամոր օրհնանքով թող բոլոր մայրերը գարնան ջերմ ու արևահոտ գիրկ լինեն իրենց մանուկների համար և գեղեցկություն ու սեր սփռեն:

ԱՐԵՎԻԿԱ ԱՅՎԱԶՅԱՆ

ՄԱՐՔ Գ.ԲԻՂՈՐ ՏՄԵՒՎԱԾԻ «ՄԻՄԻՆ ՀՐՏԱՐ»

ԱՂՔՅՈՒՐԻ ՄԱՍԻՆ

«Հարձեր յոթն էին, իսկ հարսնացուները՝ իմը» (Երգ երգոց 2:7)

Առակավոր այս խոսքն աղոթքի ժամն է ազդարարում, որ եղել է հնուն և կա իմնա: Իսկ ինչու՞ ենք օրվա քնթացքում իմը անգամ աղոթք կատարում: Ասում են՝ իմը պատճառով:

1. Երկնքում պաշտոնյաների իմը դաս կա: Ըստ Գրանց թվի՝ սուրբ եկեղեցիքն իմը անգամ է աղոթում:

2. Եկեղեցու խորհրդի իմը կարգ կա: 3. Տերն Ավետարանում իմը երանություն խոստացավ արքատներին, հեզերին և արդարների, ուստի իմը անգամ ենք աղոթում, որ խոստացած պարգևներին արժանանանք:

4. Հոգու գործությունը յոթն է, այսինքն՝ հույս, հավատ, սեր, խորագիտություն, արհուրյուն, պարկեշտություն, արդարություն. սրանց սրբության պահպանման համար աղոթում ենք իմը անգամ:

5. Մանուկ մոր արգանդում իմը ամուսն է ձևավորվում, և ապա խավարից ծնվում է աշխարհի լույսը, ուստի իմը անգամ ենք աղոթում, որ կյանքի խավարից հավիտենական լույսը ելնենք:

Աշխարհականների համար ընդունված է երեք անգամ աղոթել:

- 1. Մարմնի, հոգու և մտքի սրբության համար:
- 2. Որովհետև մեղքի, խորհուրդների, խոսքերի, գործերի տեսակները երեքն են. սրանց թողության համար երեք անգամ ենք աղոթում:
- 3. Քամի որ հոգու բաղադրիչները երեքն են, որոնցով մեղանշում ենք՝ խոսք, ցատկ և ցանկություն. ընդդեմ սրանց՝ երեք անգամ ենք աղոթում:
- 4. Մեր մտքում մեղքը ծնվում է երեք բանից՝ կամք, իմացություն և հիշողություն. կամքով ենք հոժարում մեղք գործել, իմացությամբ խորհում ենք չարը: Միշտ մտապահում ենք ցանկությունը և գործում, ուստի սրանց դեմ երեք անգամ ենք աղոթում:

5. Մեր հասակն էլ ունի երեք շրջան՝ մանկություն, երիտասարդություն և հասուն շրջան:

6. Կյանքի դոստորունները երեքն են. այս կյանքը, որում մոռով ու մարմնով մեղանշում ու պակասվում ենք. մահից հետո, ուր մարմնագուրկ հոգին է. հարությունից հետո, երբ հոգով ու մարմնով անապական ենք դառնում:

7. Ամեն օր մեզ երեք բան է հարկավոր՝ գործ ու վաստակ, կարիքներ, մարմնի հանգիստ ու խաղաղություն: Առավոտյան աղոթում ենք մեր գործի ու վաստակի հաջողության համար, ճաշից աղոթում ենք, որովհետև Նա է մեր կերակուրը տալիս:

8. Ի դեմս Սուրբ Երրորդության՝ երեք անգամ ենք աղոթում: Առավոտյան Հոլը ենք դիմում, որովհետև Նրանից են ծագում բոլոր բարի պարգևներն աշխարհում, ցերեկն աղոթում ենք Որդուն, որովհետև Նա է մեզ տալիս հոգևոր և մարմնավոր կերակուր՝ Իր արյան և մարմնի սուրբ պատարագը, երեկոյան աղոթք ենք հղում Սուրբ Հոգուն, որովհետև Նա է մեր հոգիներին հանգիստ ու խաղաղություն պարգևում. այժմ՝ մեր մահնում, հետո՝ գերեզմանում, դրանից հետո արդեն՝ հավիտենական հանգստի մեջ:

Դարց է ծագում. ինչո՞վ են տարբերվում ընդհանրական ու առանձնական աղոթքները: Նախ՝ ընդհանրական աղոթքը հարկավոր է կատարել զգալարաններով, իսկ առանձնականը կամավոր է, մտքով լուսափայլով: Առաջինը պարզ է և հատուցում և մեկ պատիվ ու փառք է, իսկ երկրորդը պակաս է նյութում և կրկնակի պատիվ ու փառք է:

Դայտի մեղքերի համար պետք է հայտնի աղոթել: Ովքեր չեն գնում եկեղեցի, պետք է ամեն օր առավոտյան և երեկոյան աղոթեն, որովհետև մարդը հոգի ու մարմն ունի:

Սովետի հին օրենքով աղոթքին յոթ

ժամ էր հատկացված, ինչպես Դավիթն էր ասում. «Օրը յոթ ժամ քեզ պիտի օրհենա»: Նրանց առաջին ժամը երեկոն էր, որովհետև օրվա սկիզբը երեկո էր համարվում, ինչպես Դավիթն էր ասում. «Այս երեկո Աստուծոն դիմեցի, և ինձ լսեց»: Հետո՝ հանգստյան ժամը, ապա՝ գիշերը և առավոտը, ինչպես Դավիթն էր ասում. «Գիշերն արթնանում էի՝ քեզ խոստովանելու»: Այս չորս ժամ աղոթքը գիշերն էին կատարում, իսկ հետո՝ իններորդ ժամը, որ նրանց աղոթքի ավարտն էր: Իսկ քրիստոնյա ազգի նոր եկեղեցում երկու ժամ էլ է ավելացված՝ առավոտից հետո և երեկոյից հետո՝ խաղաղականը:

Սարգսրեն ասում է. «Օրհնեցե՛ք Աստուծոն և սաղմոս ասացե՛ք Նրան, ճանապարհ պատրաստեցե՛ք Նրա համար, որ ճատուն է երկինքների երկնքում՝ արևեքում»: Եվ դարձյալ ասում է. «Երկրի թագավորություններ, օրհնեցե՛ք Աստուծոն, ճանապարհ պատրաստեցե՛ք Նրա համար, որ ճատուն է արևմուտքում»:

Այս է, որ կար երկինքներից երկինք՝ Բանն Աստված, որ հրեշտակների պայծառ ու լուսավոր դասերից օրհնաբանված՝ եկավ երկիր, որ արևմուտքն ու խավարն է, Մարդու Որդի եղավ: Այս պատճառով քրիստոնյաներս, համաձայն վերին զվարթունքների (հրեշտակների), արևմուտքից արևելք ենք աղոթում՝ առ Քրիստոս Աստված:

Երբ միառը, խորհուրդներն ու զգայաբանները միասնաբար արտահայտում են այն, ինչ մտքում կա, սա է արգասավոր ու աստվածահանո աղոթքը: Մինչդեռ երբ շուրթերով աղոթում ենք, բայց աղոթքը մտքից չի բխում, այն անպտուղ է՝ ոչ չար, ոչ էլ բարի:

Իսկ երբ շուրթերով աղոթում ենք, մտքով չար խորհում ու մարմնական ցանկությունների մեջ մխրձվում, սա չար է և մահացու հանցանք:

Աստված հավիտյան օրհնված է...

Ամեն...

Գրաբարից արևելաաշխարհի փոխարքեպոստ Երեմյան արևելակա ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՀՈԳԵՎՈՐ ՏՈՒՆԱԶՈՒՅՑ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐ  
Ապրիլի 20 - Երևան Սուրբ Խաչի Ապրիլի 24 - Տեղասպանության օր

ՀԱՄԿ

Կանաձորի մարդու իրավունքների գրադարանում ստացվել է ՀԱՅՈՑ ՏԱՆԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ԱՌԻՅՈՒՆՆԵՐ «ՀԱՄԿ» պաշտոնական ամսագրի հերթավաճ՝ 12-րդ համարը: Այն ներառում է Մասիս վրո. Զուպույանի, Զարեր արք. Ազնաուրեանի, Հակոբ արք. Գլենեանի, Նարեկ եպս. Ալենեզեանի, Սահակ արք. Եմիշեանի և այլ հոգևորականների թարգմանած և հեղինակած հայոսբանական, մեկնաբանական, աստ-



վածաբանական, պատմա-ուսումնասիրական, երիտասարդական, գրական, գրախոսական խորագրերի ներքո լույս տեսած մի շարք ուշագրավ նյութեր, որոնք արտացոլում են հայ եկեղեցու հավատքը, եկեղեցու պատմությունը, ժամանակակից երիտասարդության մտահոգությունները, հայ լեզուն որպես հավերժության աղբյուր, ինչպես նաև քրիստոնեությունը որպես կրոն:

Համարում տեղ են գտել նաև միջեկեղեցական, դպրեկանցի կյանքն ու կաթողիկոսարանի իրադարձությունները ներկայացնող լուրեր:

ԽԱՉԻ ԵՐԵՎՄԱՆ ՏՈՆ

Տոնը կատարվում է ի հիշատակ Խաչի հրաշալի երևման, որը տեղի է ունեցել 351 թվականին, երբ Երուսաղեմի վրա Պողոսոսյանցի մինչև Չիթենյայ քե խաչանման լույս է ճառագել: Այս առնչությամբ Երուսաղեմի հայրապետ Կյուրեղ Երուսաղեմացին ասել է Խաչի անհատական և հղում Կոստանդուպոլսի մայր քրիստոնեական հավաքում: մեջ: 5-րդ դարում այս սամակը բարձրանալով էր Խաչի տունը և այժմ էլ տունն օրը ընթերցվում է եկեղեցում:

Խաչի երևման տոնին հատուկ շարական չի նվիրվել. այդ օրը երգվում են Խաչի նյութ տոների շարականները, որոնցով փառաբանվում է Խաչը:

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Յ Թ - Ա Ձ Դ - Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր


ԻՄ ԲԱԺԻՆ ԶԱՐԸ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՅԻ ՀՆԵՔԻՆ

Վանաձոր քաղաքի կենտրոնական արդյունաբերական (Տիգրան Մեծի 1) վրա կառուցվելու է Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքը:

Շենքի շինարարությանն իր աջակցությունը կարող է բերել յուրաքանչյուր ոք՝ իր բաժնի քարը դնելով շենքի պատին:

Միավաճակ, օրեցօր մեծանում է Ներդրումներ կատարողների թիվը:



18. Նարինե Մկրտչյան, Սյունիքի մարզ, գ. Բուխակոթ (1 քար՝ 250 դրամ)
19. Նունե Խաչատրյան, Սյունիքի մարզ, գ. Դարսաս (1 քար՝ 250 դրամ)
20. Մելանյա Զամբարձումյան, Սյունիքի մարզ, ք. Սիսիան (1 քար՝ 250 դրամ)
21. Լիաննա Սահակյան, Սյունիքի մարզ, ք. Սիսիան (1 քար՝ 250 դրամ)
22. Գուրգեն Դոկտեպյան, Լոռու մարզ, գ. Ջորպոլոլ (2 քար՝ 5000 դրամ)
23. Խաչիկ Արիսյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (40 քար՝ 10.000 դրամ)
24. «Նիվկար» ՄԼՈ, Սյունիքի մարզ (80 քար՝ 20.000 դրամ)

Եթե ցանկանում եք Ձեր մասնակցությունն ունենալ այս կարևոր գործում, նպաստել Մարդու իրավունքների կրթության զարգացմանը, ապա կարող եք Ձեր ԲԱԺԻՆ ԶԱՐԸ

դնել Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքի պատին՝ հատկացնելով ընդամենը 250 դրամ:

Գումարը կարելի է փոխանցել հետևյալ բանկային հաշվի համարին՝ 001-093392-001 ԷՆ-Ե-ԲԻ-ՍԻ (HSBC) բանկում կամ պարզապես գանգառարել +374 (322) 22967 հեռախոսահամարով և տեղեկացնել Ձեր այդ ցանկության մասին:

ՀՀ, 2003, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբանցք, թիվ 2

Մո այսօր ՄԻՀԴ շենքի կառուցման հանգանակությունը մասնակցություն է ունեցել 119 մարդ 7 մարզերից՝ ներդրելով 199.800 դրամ գումար:

ՀԱԿԿ նախագահության, աշխատակազմի և շահառուների անուկնից շնորհակալություն ենք հայտնում բոլոր նվիրատուներին Մարդու իրավունքների կրթության զարգացմանը նպաստելու համար:

ՄԻՀԴ շենքի կառուցման համար անիրաժեշտ է 440.880.000 դրամ կամ 1.763.520 քար:

ՆԿԻՐԱԲԵՐՎԵԼ Է 799 քար  
ՄԱՅՑԵԼ Է 1.762.721 քար

- ՆՈՐ ՊԱՏԱԴԻՐՆԵՐՆ ԵՆ՝
1. Գրվարդ Խաչատրյան, Սյունիքի մարզ, ք. Գորիս (1 քար՝ 250 դրամ)
  2. Դովիկ Բաղդասարյան, Սյունիքի մարզ, գ. Դարթաշեն (1 քար՝ 250 դրամ)
  3. Նազելի Առաքելյան, Սյունիքի մարզ, գ. Խնձորեն (1 քար՝ 250 դրամ)
  4. Նունե Արսյան, Սյունիքի մարզ, ք. Գորիս (1 քար՝ 250 դրամ)
  5. Կրնա Մկրտչյան, Սյունիքի մարզ, ք. Գորիս (1 քար՝ 250 դրամ)
  6. Նարյա Զարայան, Սյունիքի մարզ, գ. Ավետ (1 քար՝ 250 դրամ)
  7. Սիֆյա Բաղդասարյան, Սյունիքի մարզ, գ. Զարթաշեն (1 քար՝ 250 դրամ)
  8. Ռաֆիկ Զևարթյան, Սյունիքի մարզ, գ. Շիտուհայր (1 քար՝ 250 դրամ)
  9. Ալինա Խաչատրյան, Սյունիքի մարզ, ք. Սիսիան (1 քար՝ 250 դրամ)
  10. Արուսյակ Դովհանիսյան, Սյունիքի մարզ, ք. Սիսիան (1 քար՝ 250 դրամ)
  11. Լուսինե Գրիգորյան, Սյունիքի մարզ, գ. Զազական (1 քար՝ 250 դրամ)
  12. Նորվարդ Խաչատրյան, Սյունիքի մարզ, գ. Շառատ (1 քար՝ 250 դրամ)
  13. Զիրարիսե Զունասյան, Սյունիքի մարզ, գ. Շաքե (1 քար՝ 250 դրամ)
  14. Քնարիկ Սահակյան, Սյունիքի մարզ, գ. Աջոտավան (1 քար՝ 250 դրամ)
  15. Վաչիկ Մանուկյան, Սյունիքի մարզ, գ. Տուրոս (1 քար՝ 250 դրամ)
  16. Պայասե Դովհանիսյան, Սյունիքի մարզ, գ. Ույծ (1 քար՝ 250 դրամ)
  17. Անահիտ Թանգյան, Սյունիքի մարզ, ք. Սիսիան (1 քար՝ 250 դրամ)

**ԱՇԽԱԴՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՄԵՆԿԱԿԱՆ ԳԵՄԱՆԵԱՏՈՒՄԸ**

Աշխարհում առաջին մանկական դեսպանատունը՝ Մեզազիքն, հիշեցնում է երեխաների իրավունքների հարգանքի և պաշտպանության ամրագրման ամսաթվերը. Նոյեմբերի 19-ը՝ երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքի կանխարգելման միջազգային օրը, և Նոյեմբերի 20-ը՝ երեխաների միջազգային օրը:


1989 թ. Նոյեմբերի 20-ին ՄԱԿ-ն ընդունեց երեխայի իրավունքների միջազգային համաձայնագիրը, իսկ 2000 թ. աշխարհի ղեկավարներն ամրագրեցին հազարամյակի զարգացման նպատակները, որոնք մեծապես առնչվում են երեխայի իրավունքներին:

Երեխաների տնտեսական, ֆիզիկական, սեռական, այլ տարաբնույթ դաժան վերաբերմունքը խնդիրներ են, որոնք պահանջում են մեծ ուշադրություն, պաշտպանություն, ինչպես նաև անհրաժեշտ միջոցների ձեռնարկում ընտանեկան, ազգային և միջազգային մակարդակներում: Երեխաները ենթարկվում են ամենօրյա դաժան վերաբերմունքի, որը հասարակական և քաղաքական ոլորտներում բազում քննարկումների տեղիք է տալիս:

Կառավարություններին ու քաղաքացիական հասարակության կազմակերպություններին կոչ անելով առավել ակտիվություն ցուցաբերել երեխաների իրավունքների պաշտպանության և հարգանքի գործում, նպաստել երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքի կանխարգելմանը՝ Կանանց համաշխարհային գագաթնաժողով հիմնադրամն (ԿԳԳՀ) առաջարկել է Նոյեմբերի 19-ը՝ երեխաների միջազգային օրվա նախօրե, ընդունել որպես երեխաների շահագործման կանխարգելման համաշխարհային օր:

Աշխարհում երեխաների առաջին դեսպանատունը ԿԳԳՀ-ի անդամ է: Երեխաների համար հնարավորինս լիարժեք պաշտպանություն ապահովելու համար դեսպանատունը առաջարկում է համակարգված գործողություններ իրականացնել բոլոր հնարավոր կառույցներում՝ նպատակ ունենալով ձևավորել երեխաներին հավասար հնարավորություններով ապահովող հասարակություն:

**«ԿՈՂՄՆԱՅՈՒՅՅԻԿ»**  
**Մարդու իրավունքների կրթության մանկական ձեռնարկ**



Եվրոպայի խորհրդի երիտասարդության և սպորտի հարցերով տնօրինության կողմից հրատարակվել է «Կողմնացույցիկ» վերտառությամբ մարդու իրավունքների կրթության մանկական ձեռնարկը: Գրքում ընդգրկված 42 գործնական վարժությունները նախատեսված են օգնելու 7-13 տարեկան երեխաների ուսուցանողներին: Վարժությունները երեխաներին մղում են ճանաչել մարդու իրավունքները և օգնում են սովորել, թե ինչպես գործել համայնքային կյանքի տարբեր իրավիճակներում:

Գրքում ներառված են մարդու իրավունքների և երեխայի իրավունքների հասկացությունների սահմանումները, մարդու հիմնարար իրավունքներին առնչվող այնպիսի թեմաներ, ինչպիսիք են քաղաքացիությունը, սեռային հավասարությունը, խոսքի ազատությունը, աղքատությունը և բռնությունը: Գիրքն անվերելի է: 2008 թ. կիրատարակվի նաև ֆրանսերեն և ռուսերեն լեզուներով: Գիրքը պատվիրելու համար կարելի է այցելել <http://book.coe.int/en/>:

«Կողմնացույցիկ» ըստ էության «Կողմնացույց» Մարդու իրավունքների կրթության երիտասարդական ձեռնարկի մանկական տարբերակն է:

Հարգելի ընթերցող, խնդրում ենք Ձեր դիտարկումներով օգնել «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթի առավել արդյունավետ ու նպատակային աշխատանքին՝ լրացնելով սույն ձևաթերթիկը և ուղարկելով խմբագրություն: Չեզմիջ ընդամենը պահանջվում է լինել անաչառ և արագ արձագանքել: Կանխավ շնորհակալ ենք Ձեր տրամադրած ժամանակի համար:

1. Ըստ Ձեզ մեր հասարակության մեջ զարգացած է իրավական մշակույթը:	5. Ի՞նչ թեմաների շուրջ հողվածներ կցանկանայիք կարդալ մեր թերթի էջերում:
Ոչ _____ Մասամբ _____ Այո _____	_____
2. Հասարակությունն իրազեկ է իր իրավունքներին:	Ձեր տվյալների նշումը պարտադիր չէ:
Ոչ _____ Մասամբ _____ Այո _____	անուն, ազգանուն _____ հասցե _____
3. Թերթը իրախոսու՞մ է մարդու իրավունքների պաշտպանությունը:	հեռախոս _____ էլ. փոստ _____
Չի իրախոսում _____ Մասամբ _____ Խրախոսում է _____	Լրացված ձևաթերթիկը խնդրում ենք ուղարկել ՀՍԻԿ գրասենյակ՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2 հասցեով: Կարելի է պատասխաններն ուղարկել նաև էլ. փոստով՝ <a href="mailto:ic@acrpc.am">ic@acrpc.am</a> կամ հեռապատճենով՝ +374 (322) 4 47 81:
4. Թերթն արժարժո՞ւմ է հասարակությանը հուզող հարցեր:	
Ոչ _____ Մասամբ _____ Այո _____	

Թերթը հրատարակվում է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական ասիանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես Եվրոպական հանձնաժողովի դիրքորոշումն արտացոլող կիսատառույթ:

<p>Հրատարակության 7 տարի Հիմնադիր և իրավապաշտպան Հայկական ասիանադրական իրավապաշտպան կենտրոն</p> <p>ՀՀ, 2003, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2 Հեռ.՝ +374 (322) 2-29-87/ հեռապատճեն՝ +374 (322) 4-47-81 Էլ. փոստ՝ <a href="mailto:acrpc@acrpc.am">acrpc@acrpc.am</a>, <a href="mailto:ic@acrpc.am">ic@acrpc.am</a> Նախնական էջ՝ <a href="http://www.acrpc.am">www.acrpc.am</a></p>	<p>Գլխավոր խմբագիր՝ Գևորգ Մանուկյան Խմբագիր՝ Զեքիյան Բաբուռյան Համակարգչային ձևավորող՝ Արմեն Սահակյան</p> <p>Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակների չեն վերադարձվում: Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս հղումը «Իրավական մշակույթի» պարտադիր է:</p> <p>Հրատարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:</p>	<p>Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Մտորագրված է տպագրության 2008 թ. 04.14: Տպագրակը՝ 2000: Տպագրվել է «Չուզակ-97» հրատարակչատանը:</p>	<p>Իրավական մշակույթ Legal Culture Православная культура Տարածվում է անվճար</p>
---	---	---	---